ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի

2015 թվականի ապրիլի 3-ի որոշմամբ և հրապարակվում է

“Գնումների մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ <<ՔՆ-ՇՀԾՁԲ-15/5>>

Պատվիրատուն՝ ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, որը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում, ստորև ներկայացնում է <<ՔՆ-ՇՀԾՁԲ-15/5>> ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին համառոտ տեղեկատվությունը:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Համաձյան որի՝

Գնման առարկա է հանդիսանում՝ Լրացուցիչ (ծայրամասային) սարքերի վերանորոգման ծառայություններ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր	Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր	Անհամապատասխանության համառոտ նկարագրություն
1	«Բևեռային ուղի» ՍՊԸ	X		
2	«Անուշ Պետրոսյան» ԱՁ		X	Մասնակցի գնային առաջարկի 2.1 հավելվածում ծառայության առանձին բաղադրիչների համար նշված քանակները և չափման միավորները չեն համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նշված քանակներին և չափման միավորներին:

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	Մասնակցի անվանումը	Ընտրված մասնակից	Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, հազ. դրամ/
1	«Բևեռային ուղի» ՍՊԸ	X	416.300
-	«Անուշ Պետրոսյան» ԱՁ		1130.000

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

“Գնումների մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կկնքվի սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Անուշ Վարդանյանին:

Հեռախոս՝ 010 564 316:

Էլ. փոստ՝ urbanpiu.gnumner4@gmail.com:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության նախարարություն